

# Բնագիտական օլիմպիադա

Դպրոցում կա  $n$  աշակերտ: Բոլորը մասնակցել են երեք առարկաներից օլիմպիադաներին և արդյունքները հայտնի են: Միջազգային բնագիտական օլիմպիադային դպրոցից պետք է մասնակցեն 3 հոգի մաթեմատիկայից, 2-ը ֆիզիկայից, 2-ը ինֆորմատիկայից: Ինչպես ընտրել այդ յոթ հոգուն, որ նրանց, տվյալ առարկայի, միավորների գումարը լինի մաքսիմալ: Յուրաքանչյուր դպրոցական կարող է մասնակցել միջազգայինին միայն մեկ առարկայից:

## Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է  $n$  թիվը ( $7 \leq n \leq 100000$ ), ապա տրված են  $n$  տողեր, յուրաքանչյուրում երեք թիվ՝ աշակերտների միավորները մաթեմատիկայից, ֆիզիկայից և ինֆորմատիկայից: Միավորները 100 000-ը չգերազանցող ոչ բացասական ամբողջ թվեր են:

## Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ ընտրված աշակերտների համապատասխան առարկաներից հավաքած միավորների մաքսիմալ հնարավոր գումարը:

## Օրինակ

### Մուտք Ելք

8

4 1 1

4 1 3

1 4 2

10 7 9 45

1 8 2

4 6 5

2 4 4

9 10 2

8

2 7 6

4 9 5

10 3 4

9 5 6 58

1 2 5

1 9 7

6 1 0 9

6 6 6